

ՀԱՅՔ

Հ Ա Ն Դ Ի Ս

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Կ Ը Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ի Ա Մ Ե Ն Ա Մ Ս Ո Յ 1 Ի Ն Ե Ի 15 Ի Ն

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէր կամ 10 ֆրանք:

Բաժանորդագրութիւնք կը հաշուիմ Յունվար 1 էն:

ՀԱՅՔ

1893 ԻՆ ԵՒՍ ՊԻՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ

Ամերիկայի Միացեալ Նահանգաց այլ և այլ հայ գաղթականութեանց մէջ ցրուած կայ մշակեալ երիտաւորդներու լէգէոն մի, որ բաղձալով «ՀԱՅՔ»-ի շարունակումն 1893ին ևս, սքանչելի ջանքեր ըրած է թերթին անցեալ բացերու մէջ մասն գոցելու և յառաջիկային համար բաժանորդաց թիւն ստուարացնելու: Դեռ ամեն կողմէ ստացած չեմք վերջնական արդիւնքն, ուստի յաջորդ թուոյ կը յետաձգեմք Հայ գաղթական Աշխարհի առջեւ դնելու համար զփայլուն ապացոյցն ամերիկեան հայ երիտաւորդաց զգօն զօրութեան:

Առ այժմ կը շատանամք ըսելով թէ «ՀԱՅՔ» պիտի շարունակուի և 1893ին:

Ներկայիս Մամլոյ տակ դրուելու պահուն ստացանք ծավալէն և եզրկտոսէն ևս քաջալերական նամակներ, որովք կը խոստանան համակրողք թերթին օգնութեան աջ կարկառել փութով, և կը բաղձան որ անվհատ շարունակեմք «ՀԱՅՔ»-ի հրատարակութիւնն: Տայր երկինք որ այս խոստումներ գործադրուէին և մեք վերստին յուսովրէպ չլինէինք:

«ՀԱՅՔ»-ն շարունակել անհնար կ'երեւէր մեզ, լակ այժմ զայն դադրեցունեն անկարելի կ'երեւի:

Եզրկտոսէն թղթակից մի գրելով մեզ՝ փորձած է պարզել ինչ որ մութ կը մնար մեզ եզրկտաւայոց վերաբերութեամբ: Թղթակիցն կ'ըսէ թէ Գահիրէի ազգային վարժարանի խլճայի վիճակն՝ բացատրութեան կարօս գաղտնիքի արդիւնք չէ, այլ պարզապէս ժողովրդեան «անտարբերութեանն» ևն: Է ընծայելի:


Այս բացատրութիւն գահ չըներ զմեզ: Չեմք կարող հաւատալ թէ եզրկտոսի մէջ խոհուն, ազգասէր, հայերէն լեզուն սիրող, ազգային դաստիարակութեան կարեւորութիւնն ճանաչող, վարչական ճրից տէր Հայեր չկան: Ընդհակառակն, պատճառ ունիմք ենթադրելու թէ կան այնպիսիք, և այդ պատճառաւ հետաքրքիր եմք գիտնալու թէ ինչ անցեալ դէպք կամ ներկայ դժբաղդութիւն արգելք կը յարուցանէ այդ պիտեաց համեմալ և արդիւնաւէտ գործունէութեան:

Entered as second-class mail matter, at P.O. New York NY

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատկեր Յովհաննէս Այվազովսկոյ. — Յովհաննէս Այվազովսկի. — Տփղիսի Հայ Լրագրութիւնն և հայերէն Լեզուն. — Հայոց Ինչո՞ւ կը Շարժի — Նամակ Կ. Պոլսէն. — Նամակ Եզրկտոսէն. — Նամակ Ալմէն. — Կիկոն ի Գասըմ-Փաշա. — Տեղական Լուրեր. — Ազգային Լուրեր. — Քաղաքական Լուրեր:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ



Յ. Այվազովսկի

Փռօֆէսսօռ Յ. Այվազովսկի, որ ծովային և ցամաքային ուղեւորութեանց սիրող եղած է միշտ, ահա վերջապէս այցելու է նաև Միացեալ Նահանգաց:

Քոլումպեան ծուցահանդիսին բարեգէպ առիթն է որ թեւադրած է ուսուհայ արուեստագիտին մէկ ուղեւորութեամբ վայելել ովկէանն, այցել Նոր Աշխարհն, ի զնին կալ Նիակարայի ջրվիժին և տեսնել միանգամայն Շիքակոյի արուեստահանդէսն:

Անցեալ օր և մեք պատիւ ունեցանք երթալ սեղմել մեր մեծանուն հայրենակցին հրաշակերտող աջն, ի Պրեվորդ-Հիւրանոցի, ուր նա օթեվանած է իւր ազնիւ տիկնոջ հետ:

Հայ ծովանկարի միջազգային համբաւն շատոնց հնչած է նաև Միացեալ Նահանգաց մէջ, և թէպէտ առաջին անգամ է որ նա կ'այցելէ այս երկիր, ուղեւորու-

Թեան սիրահար Ամերիկացիք հանդիպած են նմա այլուր, ինչպէս յիտալիա, ուր մի քանի տարի առաջ ամերիկո-հի տիկնայք ոմանք, Ֆլորենցա քաղաքին մէջ, առ դուրս Հիւրանոցին ուր Փռ. Այվազովսզի կը սպասուէր, խըմբակ կազմեցին, և պսակ մի դրին ի գլուխ մեծանուն նկարչին:

Նոյն Ֆլորենցա քաղաքի Գեղարուեստից Ճեմարանին ուսուցչական մարմինն պատուեց զՀայ ուսուցչապետը՝ նորա մեծ կենդանագիրն գնելով ի չարս մեծ նըկարչաց ի Palais de Pitie:

Այվազովսզույ 120 նկարներն կը զարդարեն ռուսական արքունիքն, և 34 հասն ալ թրքաց Սուլթանին ապարանքն: Բազում ընկերութիւնք և ժողովուրդք, իշխանք և կայսերք պատուած են զՀայ նկարիչն նշաններով և ժապաւէններով, և դեռ երկու տարի առաջ Ֆլորենցա պատուեց զնա բարձրացունելով յաստիճան Գոմմստէտ տը լա Լէօնոմ տ'Օմէտոն:

Սակայն իշխանաց նախանձելի և յամենից մեծարեալ այս նկարիչ խոնարհ է իբրեւ զմանուկ, ոչ կրելով ուրիշ նշան պատուոյ բաց յայն մեծ ճակատէն որով օտտած է զնա Արքայից Արքայն, և որոյ վերայ սպիտակ հերք կը դիզուին զերդ պսակ արծաթափայլ:

Այո՛, փառաւոր է այդ ճակատ որոյ ետե կը սահին գետք, կը վիթին ջրվէժք, կը յուզին ուլկէանք:

Եւ ի՞նչ սքանչելագործ ձեռք, որ վրձին առած կը սկսի հրաշիւք իմն հեղուլ տարածել կառւի վերայ ծովերու փոթորիկներ, իբրեւ սանձահարեալ զօրութիւններ բնութեան, որոց առջեւ իմացող մարդկութիւնն կը կենայ սքանչացեալ:

Փռ. Այվազովսզի այժմ 75 տարեկան, ունի ալեւոր հերք ու հասակ, բայց ուղղաբերձ է և ուժով իբրեւ երիտասարդ. ոչ ձայնն ոչ ձեռքն դեռ գողցողիւ նշան կուտան: Նորա ձեռք պահպանած են շարժմանց բոլոր կորովն ու ճշգրտութիւնն և հաւանական է որ նա մտքի և ձեռքի զօրութեանց լրութիւնն վայելէ դեռ ոչ սակաւ տարիներ: Ո՛չ ապաքէն և Միքայէլ Անճելոյ, ի հասակի 89 ամաց, մահուանէն քիչ ժամանակ առաջ, դեռ սքանչելի նկարներ կը նկարէր Հոգովի Ս. Պետրոս եկեղեցւոյն համար:

Այվազովսզի 1817ին ծնեալ է, Հայ հօրէ և Հայ մօրէ, ի թէոքոսուպոլիս: Նա Հայ ծնած է և Հայ կ'ապրի ցայսօր: Ի հարկէ ռուսական հպատակ է, և փեդրուպուրկի Գեղարուեստից Ճեմարանին մէջ՝ ռուս վարպետներու աշակերտած է 14 տարեկան հասակէն ց19. յետոյ ռուս կառավարութեան ծախիւք յղուած է յիտալիա, ուր ևս ուսած է չորս տարի: Ապա փեդրուպուրկի Գեղարուեստից ճեմարանին խորհրդական անուանուած է: Բնական է որ այս ամեն պարագայք տային նմա ռուսի երեւոյթ, և նորա համբաւն իբրեւ ռուս նկարչի տարածուէր յեւրոպա: Այսու ամենայնիւ նա Հայ կը զգայ ինքզինք, կը սիրէ իւր ազգն, կը սիրէ խօսիլ Հայերէն և լաւ կը խօսի, թէ և ուրիշ ոչ սակաւ լեզուաց ալ ծանօթ է:

Մեր առաջին տեսակցութեան մեջոցին՝ հետաքրքրութեամբ կը հարցնէր ազգային լուրեր: Խօսեցանք խորիմեան Հայրիկի մասին. «Եթէ նա հոս լինէր, ըսաւ եռանդեամբ, ես կը շինէի նորա պատկեր»:

Շինած է նա այս օրեր պատկեր մի Հայկազան և սրբազան միանգամայն՝ զպատկեր Մասեաց, արեւն հորիզոնին վերայ, և վեհապանծ կրկին մասիք համակ ողորմեալ մեղմ կապուտակ լուսով: Նոյ նահապետ և ընտանիքն ի ստորոտս Մասեաց նկարուած են: Այդ մեծ և վսեմ նկարի՝ առաւել քան այլ ու է պատկերի առաջ՝ Հայու մտքին մէջ ազգային և աստուածաշունչ աւանդութիւնք իրարու հետ կ'օղակաւորին, և մարդ կը թուի Արարատի գագաթէն զիտել Հայ ազգի հեռաւոր անցեալն, և այն նորածագ արեւ որ հորիզոնին վերայ է, կը թուի նմա աւետել ազգային նոր դարու մերձեցող առաւօտն:

ՏՓՂԻՍԻ

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ

ԵՒ ՀԱՅՏԵՐԷՆ ԼԵՁՈՒՆ

ՄՇԱԿ, ԱՐՁԱԳԱՆՔ, ՆՈՐ-ԴԱՐ

(Շար. Տես թիւ 22)

Դ

Անդառնալի պայմանաւ անցեր դացեր են այն ժամանակներ երբ գրաբարի կնճիռներով խառնուած աշխարհարար գրեւն էր ոչ սակաւ գրողաց փառքն: Այժմեան մամուլն բառեր ճոճացունելու չծառայել, այլ գաղափար՝ միայն հաղորդելու. և ուստի թերթք, իբրեւ հանրութեան համար բացուող բերաններ, կը խօսին հանրութեան հասկանալի լեզուաւ:

Այս սկզբունք Հայ Աշխարհի մէջ ընդ հանուր ընդունուած է: Եւ սակայն ամեն թերթ միևնոյն եղանակաւ չըմբռներ ու գործադրեր զայն: Այդ մասին Ռուսահայ թերթք կը տարբերին առհասարակ թերթերէն, և միևնոյն երկրի թերթք ալ՝ իրարմէ: Ամենն ալ սակայն ժողովրդեան հասկանալի լեզուաւ կը գրեն, թէ և իրարմէ տարբեր: «Արձագանք»-ի լեզուն, օրինակի համար, ինչպէս և «ՆորԴար»-ին շատ տարբեր են «Մշակ»-ի լեզուէն, թէ և երեքն ալ հասկանալի են Տփղիսի հասարակութեան և Ռուսահայոց:

Կարծեմք թէ գրողք երբեմն չափազանց հեռու էին հանրութեան լեզուէն, իսկ այժմ՝ չափազանց մօտ կ'երթան գրեւնք շրջապատող ամբողջ լեզուին, և ռուսահայ թերթք առաւել քան զառհասարակացն:

Եւ յայդմ է Տփղիսի թերթից երկրորդ և աւելի խոշոր պակասութիւնն— չափազանց մօտ երթալ ամբողջ լեզուին:

Բայց ի՞նչպէս կարելի է լեզուական խնդրոց մէջ որոշել չափաւորն չափազանցէն:

Տփղիսի թերթից լեզուն դատելու համար մեք մեր անձնական ճաշակի չպիտի հետեւիմք, այլ աշխարհի քերականական օրինաց և հայերէնի ուղիղ և անուրանալի կանոնաց:

Ահա մեր սկզբունք.—

Ամբողջ արտասանական և քերականական սխալներն չմերժուծել մամուլ մէջ, այլ ուղղել այնս հրապարակաւ յիմ խօսքի մէջ՝ նասկանալի մնալու պայմանաւ:

Ի բացատրութիւն՝ ի մէջ բերեմք մի քանի օրինակ.

(1) Հայերէնի մէջ բայական չորս տարբեր վերջաւորութիւններ կան— սիրեմ, ունիմ, աղամ, առնում: Տփղիսի թերթք իմ վերջաւորութիւնն չեն գործածեր, որոյ տեղ, հետեւելով ամբողջին, գրած են եմն, և կը գրեն «չունեմ» «լինեմ» և այլն: «Իմ» վերջաւորութիւնն գրաբարի յատուկ երեւոյթ մի չէ որպէս զի կարենայ ըսուիլ թէ մեռեալ է այն, այլ կը գործածուի Հայաստանի և Փոքր Ասիոյ գաւառաբարբառներուն մէջ, ինչ որ կը հաստատէ թէ ո՛վ որ եմն փոխէ իմ վերջաւորող բայերն, ամբողջին սխալն կ'որդեգրէ՝ բուն և ուղիղ հայերէնէն զարաւորելով:

(2) Տփղիսի թերթեր յատուկ անուանց ծայրն որոշիչ յօդ կը դնեն սովորաբար և կ'ըսեն «Աֆղանիստանի», «Չինաստանի», «Արաբիանեաց Աւետիսը», «Նազարեանց Տիգրանը»: Ահա յայդմ ևս չափազանց մօտ կ'երթան ամբողջ լեզուին, իւրացունելով սխալ մի որ ոչ միայն հայերէն լեզուի այլ ընդհանուր քերականութեան գէժ խոշոր յանցանք մ'է: Այդ սխալ գործող խմբագիրներն կուշտ պիտի ծծաղէին եթէ Փռանսերէն գրուած տեսնէին «Le Nazarianiz Tikian» կամ անգլիերէն «The Araskhantantz Avadis», բայց նոյնն անհետեւ չերեւիր իրենց երբ հայերէն գրեն.— ինչո՞ւ, որովհետեւ

Հայերէն է, և որպէս թէ Հայերէնի մէջ ամեն անհետ-
թեթ սխալ ներքին կը լինի եթէ ռամիկն կենայ խմբա-
գորի կռնակին... Եւ կարող են այդ խմբագրողը ըսել
թէ ընթերցողն, որքան և անուս լինի, պիտի չհասկնայ,
եթէ առանց յօդի ուղիղ ըսուի «Արասխանեաց Աւետիս
և Նազարեանց Տիգրան ձեզ հետ կատարելապէս» համա-
ձայն չեն»:

(3) Տփղիսի թերթը ներգործական բայերուն սեռի
խնդիրն սեռական կամ սրական կը դնեն փոխանակ հայ-
ցականի, և կ'ըսեն,

— «Վարձատրեց դերասաններին», փոխանակ ըսե-
լու «դերասաններն»:

— «Մինի պաշտպանում էր» փոխանակ ըսելու
«զմին»:

— «Ատենը դատապարտեց Դրիւմոն հրապարա-
կագրողին երեք տարուայ բանտարկութեան»:

Մեր Հին ոսկեղինիկ մատենագրութեան ինչպէս
նաեւ այժմու ռամիկ գաւառաբարբառներու մէջ՝ ներգոր-
ծական բայերն Հայցական խնդրով կը գործածուին և այս
ընդհանուր, համաշխարհային քերականական կանոն մ'է.
բայց մեր ռուսահայ գրողներ բովանդակ մարդկութեան
և Հայութեան լեզուին պարզ մէկ կանոնն կ'եղծանեն ի-
րենց չուրջ գտնուող Հայ մասնաւոր հասարակութեան
այլանդակ սխալն յարգելով. — ահա այդ է Հափաղանց
մօտ երթալ ամբոխին լեզուին:

Եւ միթէ ռուսահայ ընթերցողը չպիտի իմանային
խօսքին իմաստն եթէ ըսուէր:

«Ատենը դատապարտեց Դրիւմոն հրապարակագ-
րողն երեք տարուայ բանտարկութեան»:

Եւ միթէ աւելի ևս պարզ պիտի չլինէր եթէ
ըսուէր

«Ատենը դատապարտեց Դրիւմոն հրապարակագ-
րողն երեք տարուայ բանտարկութեան»:

«Ըզ» կը գոչէ աստ թիֆլիսցի խմբագիրն, «ըզ»
ո՛չ, պարո՛ն, մենք աշխարհաբար, ժողովրդական լեզուով
գրում ենք, ոչ թէ գրարար»:

Ներեցէք, աղնիւ պաշտօնակից, մենք չենք առա-
ջարկեր որ գրաբար գրէք, կամ ո՛ր է խրթնութիւն մու-
ծանէք ձեր լեզուի մէջ. Ձ նախդիրն գրարար չէ, այլ
Հայերէն: Այդ պատուական նախդիր կը գործածուի
ցարդ գրեթէ ամեն գաւառաբարբառի մէջ առաւել կամ
նուազ յաճախ: Մեք անձամբ լսած եմք «զ» նախդրի
գործածութիւնն անուս, ռամիկ Հայերէ, մանուկներէ, ծե-
րերէ, մամաներէ ու մեծ պապաներէ: Նոքա կ'ըսեն, օ-
րինակի համար, «քըզքեզ» «քըզ Բուրդը» որ «քան
զքեզ»ի կծկեալն է, ուր սակայն զ նախդիրն անկորուստ
պահպանուած է: Ի դէպ. այս օրինակ կը յիշեցունէ
մեզ ուրիշ երեւոյթ մ'ալ. նոքա — ռամիկը — բաղդա-
սութիւնն կ'ընեն քան զ դնելով Հայցականին վերայ,
ոչ թէ բացառականով: Ուր Տփղիսի (և Պոլսոյ ալ) գրո-
ղըն կ'ըսէ «մեզնից» (կամ «մեզմէ») շատ են» Հայաստա-
նի պարզ Հայն կըսէ «քըզմեզ շատ են» Ուրեմն և հրա-
պարակագրողն աւելի լաւ կ'ընէ եթէ «քան զմեզ շատ
են» գրէ՝ ուղիղ Հայերէն ըսող ռամիկն և ոսկեղինիկ
Հայ մասնաւորին հետ, քան թէ «մեզնից» կամ «մեզմէ»
շատ են» գրէ՝ թրքական լեզուին ազդեցութեամբ աղա-
ւաղեալ ամբոխական լեզուին հետեւելով:

Ո՛ր հրապարակագրողը Տփղիսի, կ'աղաչեմ հաշտ-
ուեցէք Ձ ի հետ, զոր անողորմաբար աքսորած էք ձեր
լեզուէ. նա ի՞նչ փնտս ըրած ունի ձեզ: Դուք մասնա-
ւոր հաճութեամբ պարտիք ընդունիլ «Ձ»ն, որ պարզու-
թիւն իսկ է, և հայ լեզուի նախանձելի շնորհաց մին է:

Եւ ընդհանրացնելով զայս կ'առաջարկեմ որ
Տփղիսի թերթը գրաբարէն ուրիշ լաւ բաներ ալ փախ
առնուն զի յիշուի նոցա երբոր լեզուական պակասու-
թիւնն է — Հափաղանց խոյս տալ գրաբարէն, կամ գրաբարի
յատուկ կարծուած երեւոյթներէ:

Ձեմք առաջարկեր բնաւ առնուլ գրաբարէն բառ
և ոճ լոկ գրաբարի սիրուն համար, այլ աշխարհաբարի
սիրուն համար. — զսա կատարելագործելու, ճշդելու,
փափկացունելու և աւելի պարզ ու յստակ գործելու
համար:

Թէ ո՛րքան բառ և ոճ, նախդիր և ասացուած կան
մեր ոսկեղինիկ Հին լեզուի մեջ, որոյ պէտք սենի արդի
Հայերէնն, զայն չեմք կրնար քննել աստ, բայց Տփղիսի
թերթը այդ պէտք խոստովանած են գրաբարի ինչ ինչ
ասացուածներ որդեգրելով: Երբ նոքա «այսու ամենայ-
նիւ», «փոքր ի շատէ», «ի միջի այլոց», «ի դէպ», «և այլն»
կը գրեն, ամբոխին լեզուէն չեն առնուր, այլ գրաբա-
րէն. և չեն ալ հոգ ըներ թէ ամբոխին անհասկանալի
կը լինին:

(Շարունակելի)

«L'ARMENIE-ARMENA» Ֆրանսերէն և Անգլիե-
րէն թերթ քաղաքական և գրական, կը հրատարակուի
ամիսն միանգամ: տարեկան բաժնեգինն է 3 թալէո 75
սէնթ հաոցէն է.

33 DE VERE GARDENS, LONDON, W.

ENGLAND

Հ Ա Յ Ն Ի Ն Չ ՈՒ Կ Ը Շ Ա Ր Ժ Ի

Բազումք «չարժում» և «յեղափոխութիւն» բառե-
րն իրարու հետ կը շփոթեն, մինչ սոքա մէկ մէկէ այն-
քան տարբեր են որքան ծաղիկն է պտղէն: Կարնոյ և
Պոլսոյ ցոյցերն չարժում էին ոչ թէ յեղափոխութիւն:
Նոքա չարժելու ելան ոչ թէ յեղափոխելու: Կարնոյ ժո-
ղովուրդն անգէն հաւաքուած էր գերեզմանատան մէջ
և աղերսագիր կը պատրաստէր Սուլթանին գթոյն մա-
տուցանելու, երբ անխղճաբար ջարդուեցան քան ջար-
դեցին: Նոցա չարժումը զարկ առած էր Մուսայի դէպ-
քէն, յորում արդարութիւնը ծաղրուեցաւ: Ամօթ թէ
պարծանք էր այդ չարժում: Գում-Գափուի չարժումն
ալ թափ տուաւ Կարնոյ չարժումէն: Այս ալ չարժելու
ոչ թէ ջարդելու չարժում էր, — իրենց ի չարժման եղող
սրտին հետ իրենց գլուխն եղող Պատրիարքն եւս չար-
ժելու:

Այս չարժումներն հարկաւոր էին Հայրենասիրական
պաղ զգացումներն տաքցունելու համար:

Հայն ինչո՞ւ կը չարժի: Գնա՛ վեց ամսական մի
փոքր մանկան քով, որ օրորոցին մէջ պառկելէն ձանձ-
րացած՝ ելնել կը տենչայ. սոսկ ձեռքդ դիր նորա թա-
թիկին մէջ, դու երբէք մի՛ քաշեր, սե՛ս թէ նա ո՛րպէս
կը սկսի ելլելու նստելու ջանքեր ընել: Այդպէս եղաւ
Հայուն. երբ անձնուէր գործիչներ անոր մօտենալով եղ-
բայրական համակրութեան տաքուկ ձեռք դրին անոր
ձեռքին մէջ, Հայն սկսաւ յիշեալ մանկան պէս ելնելու
ձիգեր ընել. և ասոր վրայ ոմանք զայրանալ սկսան փո-
խանակ ուրախանալու:

Յառաջդիմելու համար նախ իւրաքանչիւր, չարժիլ
պէտք է. այդ է բնական օրէնքը: Բայց խելօքներ կան
որ կը պահանջեն որ մեր ազգը կրթութեամբ ու դաս-
տիարակութեամբ հասնի ի շարս քաղաքակիրթ ազգաց.
այսինքն սանդղին վերի աստիճանէն հրաշիւք սկսի իւր
ընթացքը: Եւ ի՞նչպէս կրնայ Հայը ազգովին քաղաքա-
կիրթուիլ, մինչ ամիս մը առաջ թուրքոյ քաղաքակիր-
թութեան կեդրոնին մէջ (ի Կ. Պոլիս) կառավարութիւնը
կը փակէ «Լիսան մէքթէպին», որպէս կարդացինք «Հայ-
քի» մէջ, որովհետեւ նորա տեսուչն մրցանակաբաշխու-
թեան առթիւ ատենաբանած է «յառաջդիմութեան, կր-
թութեան և քաղաքակիրթութեան» վերայ.....

Ի՞նչպէս կրնայ Հայը յառաջագիծել այդպիսի կառավարութեան սակ, որ նոյն իսկ իւր դպրոցաց մէջէն կ'արտաքսէ «յառաջգիծութիւն կրթութիւն» բառերն իր-րեւ վտանգաւոր, որպէս Հայ թեմերու առաջնորդներն արտաքսած է, որպէս Հայ արժանաւոր ուսուցիչներն արտաքսած է իրենց գործունէութեան ասպարէզէն: Եւ կ'ուզենք դեռ որ Հայ գաւառներն յառաջ երթան առանց առաջնորդի, և որ Հայ սղայք կրթութիւն առանց կրթիչի...:

Ո՛չ, Հայն չարժեքու ստիպուած է: Ինչո՞ւ չչար-աէին ինուսի Հայերն երբ տարի մ'առաջ Մօսկովք քիւրդ աւազակն Մարքի գիւղէն Հայ կին մի առեւանգեց, և Հայոց բողոքոյ ձայնն անխելի մնաց յունկն կառավարու-թեան: Շարժեցան, գինեալ խմբով երթալ աւազակին գիւղին վերայ և բռնի առեւանգել նորա կանայքն ու Հարսներն, զոր երբ լսեց կառավարութիւնն, յայնժամ ազդու միջոց գործածեց, և աւազակն թողուց Հայ կինն որ վերադառնայ իւր տունն՝ թէ և գլուխն և մարմինն վիրաւորեալ:

Ինուսի Հէրամիկ գիւղին մէջ Հարկահաւաք Ահմէտ չաւուշն, բոլոր վճարելու անկարող Հայերն կը հաւաքէ նոցա պարանոցներն լուծելով իրարու կը կապէ և ինքը կը նստի անոնց վերայ խտրազան ի ձեռին, և գանոնք...ով լեցուած կալի մի մէջ կը քչէ բոկոտն և կը քալե-ցունէ: Ըսէք, ե՛ղբարք, «Հիմի՞ է լուծ Հայն»:

Խարբերդու Մալիկէօղլեան Գէորգ Ազայի խանու-թէն ապրանք գողցուեցաւ. գողն պարզ գտնուեցաւ, բայց ինքն բանտարկուեցաւ գողին տեղ: Յիշեալի խա-նութի մէջ գետնափոր ծակ մի եկած էր Միւրօ անուն թրքի մի տնէն. կառավարութիւնն ըսաւ խանութին տի-րոջը թէ «դու ես բացեր այդ ծակն, այո ինչ նպատակաւ» Այս անհեթեթ կարկառուքն չատ չգիմացաւ. և Գէորգ Ազան անպարտ արձակուեցաւ:

Այսպիսի Հարստահարութիւններ Հասարակ բան դարձած են թուրքիոյ մէջ, և տակաւին կ'ուզե՞նք որ Հայն անչարժ և անմուռն մնայ: Ո՛չ, նա այնքան նու-աստ չէ որ չչարժի, և որքան շատնան զրկանք և հարս-տահարութիւնք, այնքան աւելի պիտի շարժի: Այսպէս-սով ազատուելու հարկը պիտի սպեղծէ մեր մէջ ընկեր-սիրութիւն, Հայրենասիրութիւն և ճշմարիտ անձնուիրու-թեան ոգի և պատրաստ պիտի գտնուիմք մեծ աւուրն: Քանզի մեծ օրն պիտի գայ, երբ Սելովամի աւազանն նորէն պիտի յուզուի, այն աւազանն ուր նետուեցան այնքան անգամալոյծներ ու այժմ բժշկուած կը խայտան մեր շուրջ. պէտք է որ Հայն խլրաի այժմէն, վարժէ ինքզինք շարժելու, որպէս զի երբ նորէն «Զուրք յուզ-ուին», ինքն ալ փութայ շարժիլ և աւազանն նետուիլ:

ԳԵՂԱՄ

ՆԱԽԵԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Բարեկամ,

Խարազան մի կ'իջնէ Բ. Դրան կռնակին. ձեռքն որ կը գործածէ զխարազանն, Ձարին հուժկու ձեռքն է, և խարազանն Հայկական Խնդիրն է: Խրիմեան Հայրիկ իբրեւ կաթողիկոս ճանչուեցաւ Մոսկովաց թա-գաւոր-կայսեր կողմանէ՝ հակառակ հաւատացելոց Խա-ֆին. Վեհափառ կաթողիկոսն առօք փառօք պիտի գայ Օսմանցւոց մայրաքաղաքն շղթայադերձ ձեռք, թագ-հայրապետական ի գլուխ, հակառակ թրքաց Փատիշա-հին: Եւ Մելիտոֆ պարզապէս ըսած է թէ դեռ այսպի-սի ուրիշ բաներ ալ պիտի պատահին եթէ Բ. Դրան չզգաւտանայ:

Խեղճ Դուռ, որ շուարած է վերջերս, չգիտնալով թէ ո՞ր կողմ պէտք է դառնայ: Եթէ կարելի լինէր բը-նաւ և ոչ մէկ կողմ պիտի դառնար, բայց չկրնար երբ

Հիւսիսի ցրտաշունչ հողմունք կը շնչեն այնքան բուռն: Յիրաւի ուսանական ծանուցագիրն աւելի սարսուռ ազդեց Փատիշահին քան ձմրան փուքն կարէր. և փատիշահն մեղմ ու փափուկ ձայնիւ շնչեց «էֆէ'նտիմ, ես Ստամ-պուլիֆին երես տուած չունիմ երբէք. դուք վոտահ ե-ղէք թէ ես ինքեմ կը յարգեմ Պէրլինեան դաշնագիրն և թէ Մոսկովաց բարեկամութիւնն միշտ պատուական է ինձ: Միայն քաղաքական պարտք մի կատարեցի Պուլ-կարիոյ նախարարապետն Հիւսիսալեւով երբ նա ոտքս եկաւ...»

Մեղի՞ Հայոցս համար գոհացուցիչ պարագայն այն է որ Դրան այս անուշիկ խօսքերն չեն լիովին գոհացու-ցած զՌուսն, որ աւելի խոնարհ և իբրեւ յոնցուորի խոստովանութեան կը սպասէր, ուստի և պիտի շարու-նակէ խարազանել ու ցաւցունել այն կռնակ որ մի քա-նի տարիներէ ի վեր իրեն դարձած էր անպատկառ կեր-պով:

Դիտելի է թէ Ռուսին այս խիստ վարմունքն ըս-կաւ Կլատտթընի իշխանութիւն անցնելէն ի վեր: Մեծ Ծերունին Ռուսիոյ և Ֆռանսայի հակակիր չէ, և տակա-ւին ոչ ոք մոռցած է նորա մեծ յօդուածն որ կը գա-տապարտէր Անգղիոյ կողմանէ ու է անպաշտօնական իսկ յանձնառութիւն աջակցելու Երեւակ Նիզակակցու-թեան՝ ընդդէմ Ֆռանսայի և Ռուսիոյ: Այժմ երբ Անգ-ղիոյ քաղաքականութեան ղեակն ի ձեռս այդ Ծերունւոյն է, հասկանալի է որ Մոսկովին նուազ կասկածի Անգղի-այէն և հետեւապէս նուազ երկիւղիւ նայի Երեւակ Նի-զակակցութեան: Ֆռանսա և Ռուսիա միացած՝ չեն վախ-նար Գերմանիոյ, Աւստրիոյ և Իտալիոյ միացեալ բանա-կաց հետ զարնուելէ, պայմանաւ որ Մեծն Բրիտանիա չխառնուի:

Յայտ է թէ Կլատտթընի իշխանութեան կը պար-տիմք միջազգային յարաբերութեանց մէջ կատարուող այս եղանակաւորութիւններն, որք նպատաւոր են և մեզ Հայոցս:

Մեք Հայքս գոհ կը լինիմք երբ Ազաաականք լի-նին Անգղիոյ վարիչքս և երբ Մոսկովին թրքէն դժգոհ լինիլով՝ անոր հետ խիստ վարուիլ կարենայ:

Հայկական խնդիրն միջազգային խնդիր մ'եղած է, և միջազգային կացութեան ջերմաչափին ելեէջն զգալի կը լինի մեր Խնդրոյն նկատմամբ ևս:

Ռուսին խիստ վարմունքն Դրան հետ նախապէս Կլատտթընի իշխանութեան և երկրորդապէս ալ Գերմա-նիոյ և Աւստրիոյ ներքին կացութեաց ընծայելի է: Գեր-մանիա ահագին ոյժ մի կորոյս երբ զՊիզմարք կորոյս—թէ և հարկ ի վերայ կայր կորուսանել զայն: Եւ այժմ այդ Պիզմարք կատաղած և ահաւաներն կրճտելով, իբր կուրացեալ Սամիսոն մի, կը թուի ցանկալ իւր հուժ-կու բազկօք ցնցել և կործանել այն մեծ Պետութիւնն գերմանական զոր ինքն հիմնարկեց, և զայս կ'ընէ կար-ծես թէ չկրնալով հանդուրժել որ երիտասարդ Կլայսմի նստի այն բարձր կայսերական գահ որոյ անհրաժեշտ նե-ցուկն կը նկատէր ինքզինք Պիզմարք, ցորչափ ապրէր:

Հանճար Պիզմարքի, հանճար արաստաւոր: Նա որ Գերմանիան կառավարեց քսան տարի և Եւրոպայն գո-ղացոյց, այժմ անկարող կը գտնուի իւր լեզու և իւր կիրք կառավարելու, և երբ չկարէ չինել ինչ, կ'ուզէ կործանելու, վիրաւորելու, զարնելու մէջ ցուցնել իւր ոյժ:

Ո՞րքան տարբեր է Կլատտթըն, յիրաւի «Մեծ» կամ «Վե՛՛ծ Ծերունին» մականուանեալ: Եւ մեք Հայքս ինչո՞ւ չուրախանամք երբ կրնամք զնա մեր համակրողաց թու-ոյն մէջ հաշուել:

ԱՆԵՐԵՒՈՅԹՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսիոյ ընդհանուր Հիւպատոսն Նիւ Եորքի, Տի. Ա. Է. Օլարովսկի և Տկն. Օլարովսկի Նոյ. 26ին, չարաթօր կէս օրէն յետոյ, փայլուն ընդունելութիւն մի տուին ի պատիւ իրենց հայրենակից հայազգի նկարիչ Փռ. Այվազովսկու, ի Բլինթըն Փլէյն, թիւ 59: Սրահներն նուրբ ճաշակաւ զարդարուած էին դափնեօք և ծաղկամբ, և Շուօպի նուագախումբն կ'երաժշտէր:

Տկն Օլարովսկի սնդուսի վերայ բաց կապոյտ շքաշէն շրջագծեալ կը կրէր, գունեղ թաւեայ ուռուցիկ թեզանեօք:

Յընդունելութեան կ'օգնէին նմա Տկն. Ռոնսլտս և Տկն. Նէֆթէլ, Օրիորդ Լի և Օրիորդ Փորթէքսը, ամենն ալ շքեղապէս արդուզարդեալ:

Ներկայից մէջ կը տեսնուէին Պալթաճի Էֆ. Թըրքական Հիւպատոս, և տիկինն. Տի. Պոթաուի, Հելլենական Հիւպատոս. Կոմս տը Րիվաս, Իտալական Հիւպատոս Տի. և Տկն. տ'Էսփինէլա, Շիլիական Հիւպատոսարանէն. Տի. Ս. Ժ. Փալիչէի, աւստրիական Հիւպատոսարանէն. քոլոնէլ Սէվէճ և Տիկինն, Տի. Լոյէն, գինուորական կըցորդ Փռանսական Հիւպատոսարանին, և տիկինն. Աւագ Զօրավար (Major General) Պըթթըրֆիլտ և Տիկինն. Երէց Թալմըճ (որ Ռուսիա այցելեց անցեալ տարի) և այլ ոչ սակաւ երեսելի անձնաւորութիւնք և բազմութիւն նկարչաց:

Պարսից Շահին՝ յանուն Ամերիկայի Հայ Գաղթականութեան՝ շնորհակալութեան ուղերձ տանող պարոնն վերջապէս վերադարձած է յԱմերիկա, և Նոյ. 26ին, ի Նիւ Եորք, Հետաքրքրներու բազմութեան մ'առջև պատմած է իւր ուղեւորութիւնն:

Թէ՛ պատուիրակն, և թէ՛ ուրիշ խօսողներ դարձեալ փորձած են հաստատել Շահին յղուած անշահ ուղերձին պատշաճութիւնն. անօգուտ փորձ որ որքան աւելի կրկնուի այնքան նուազ կ'ազդէ: Պարսից Շահն իւր հպատակ Հայոց հետ լաւ կը վարուի եղբր, զայդ հասկնալ գիւրդին է, բայց ոչ մէկու խնդն հասած է դեռ թէ ինչո՞ւ Ամերիկայի՝ Հայերուն անկ կը լինի Շահին պատուիրակ յղել և շնորհակալ լինիլ տտոր համար:

Ժողովոյն ատենապետն ջանացած է նաև բացատրութիւն մ'ընծայել թէ ինչո՞ւ անուո՞րմն՝ հասարակ գործաւորաց դասէն՝ ընտրուած էր ուղերձն տանել մատուցանելու Պարսից ինքնակալին. բացատրութիւն բոլորովին աւելորդ անոնց համար որք պատուիրակէն արդէն չէին կրնար սպասել ինչ որ փոքր ի շատէ մշակուած մարդ մի պիտի կարենար պատմել 12 ամիս Պարսկահայոց և ուսահայոց մէջ պտըտելէ յետոյ. — բացառութիւն աւելորդ նոյնպէս անոնց համար որք այդ կատակերգութեան բնութեան լաւ տեղեակ էին սկզբէն, և եթէ դեռ կային անտեղեակներ, նոքա ալ խելամուտ եղան երբ ժողովարարին ճակատն գրուած հետեւեալ բառերն կարդացին. —

Կեցցէ «Արմէնիա» և «Հ. Հ. Միութիւն»

Այո՛, նա որ իբրև Ամերիկայի Հայոց պատուիրակ գնաց, էր իրօք Հ. Հ. Միութեան անդամն ու գործիչն, և իբրև այդ միութեան առաքեալն գնաց, ուղերձն իբրև դիմակ բռնելով երեսին, ամեն ուրեք քարոզել «Արմէնիա»ն ու «Հ. Հ. Միութիւն»ն և քարոսել «Հայք»ն ու «Հնչակ»ն ևն:

Հ. Հ. Միութիւնն էր յղացած պատուիրակ յղելու գաղափարն իբրև միջոց Ամերիկայի և Պարսկաստանի մէջ իւր յետին ապաստանարան քայքայումէ փրկելու, և առ այդ ընտրեց իւր անդամներէն ուսեալ և կրթեալ մին

որքան կրնար գտնուիլ Հ. Հ. Միութեան բարձրագոյն կարգին մէջ. — ուրիշ բացատրութեան պէտք չկայ:

Աւա՛ղ դրամին, սակայն, զոր Հ. Հ. Միութիւնն ծախսեց այդ պատուիրակութեան համար, քանզի դորա տպաւորութիւն շատ տխուր եղած է ամեն խոհուն Հայոց վերայ, որպէս Պարսկաստանէն մեզ ուղղեալ նամակներ կը ցուցնեն և որպէս Տիգրիսի «Տարազ» թերթն ալ, կարծեմք, հաստատած է:

Հ. Հ. Միութիւնն այդ միջոցաւ Հայ Գաղթական աշխարհի առջև պարզեց իւր բոլոր խեղճութիւն, ցուցնելով ամեն խոհուն Հայու որ ճանաչեց զպատուիրակն, թէ որպիսի սիւնեքով վերայ կը հանգչի այդ փոքուն «Հայոց Հայրենասիրական Միութիւն»:

Գաղով ժողովոյ արարքին, բազում զուարճալի բաներ պատահած են, զորս նկարագրելու տեղ չկայ: Յիշենք միայն՝ թէ ժողովոյ նախագահող Հայ «Կոմսն» (Կոմս) բաւական երկար խօսած է խոսկ և հասուն ձմերուկներու վերայ, և տեսնապետն համարձակեց ինքեղ իւր վերջ տալ անգրաւ ոռակաբանութեանց: Դժբախտաբար ատենապետին այս ակամայ դիտողութիւն «խօսքն չաքարով կտրելէ» աւելի՛ ձմերուկ մի սուր դանակով կտրել ձգելու նմանած է: «Կոմսն սակայն շատ վիրաւորուած չէ, իւր դիւրազգայութիւն ամերիկեան ժողովներու մէջ աւելի դառն փորձեր կրած ու բղացած լինելով...

Լինէն կը գրեն մեզ. —

Քաղաքիս «Արշալոյս Հայաստանի» ընկերութեան 14դ նիստն տեղի ունեցաւ անցեալ կիրակի սովորական ժողովարարին մէջ, արտասովոր եռանդեամբ:

Երկու Ամերիկացի ընկերվարականներ լած լինելով ընկերութեանս վրայ ըստ իրենց փափաքանաց հրաւիրեալ էին խօսել:

Եւ յիշաւ ներկայ լինելով խօսեցան հաւասարութեան, ազատութեան և տիեզերական եղբայրութեան վրայ, որ արդէն ընկերութեանս ալ նպատակն է:

Պրն. Ա. Ա. ապա Հայոցս կողմանէ շնորհակալութիւն յայտնեց նոցա: Մին յանդամոց մեր ընկերութեան կարգաց Տիար Զերազի թերթէն մեր կրթականիշատակ բանաստեղծին՝ Գամառ-Քաթիպայի՝ բանաստեղծութիւններէն «Հայոց թուրք» Ամերիկացի հիւրերն շատ համակրեցան այդ ոտանաւորին՝ ըսելով «Կեցցեն Հայք որ գիտեն ուր պէտք է թքնել» ջերմ ծափահարութեամբ մը:

Հաճելի տպաւորութեամբ և գոհունակ սրտով մեկնեցան հիւրերն:

Հալապի Կեդրոնական բանտն եղող բանտարկելոց ի նպաստ 40թալէն հանգանակուեցաւ ժողովոյ մէջ, որ Հնչակեան կուսակցութեան ձեռամբ մեր դժբաղդ բանտարկելոց հասցունեն:

Մ. Կ. Սարգիսեան

Շիքակոյէն կը գրեն մեզ,

«Շիքակոյի Հայ ուսանողաց թիւն զատմանալի կերպով կ'աճի: Այժմ կան հոս 13 ուսանողներ, որոց 7ն բժշկութիւն, 3ն աստուածաբանութիւն և 3ն գիտութիւն կ'ուսանին: Վերջին երեքի մէջ է Հայ օրիորդ մի — Օր. Կոստիկեան»:

— Մասաչուսէցի Լորէնս քաղաքի «Ազգ. Ընկ. Հայոց»ն ունեցած է հանդէս մի, սւր եռանդուն ճառեր խօսուած են: Տիար Մ. ի այդ առթիւ խօսած էն կառնումք հետեւեալ տողերն, որ կուղղէ առ էն

«Եկեղեցի, Աւետարան,

ամենայն ինչ ոտից կոխան.

Զիք փրկութեան տաճար խորան,

Այլ քարոզուի Թրքաց խուրան:

Է՛ջ Հայաստան, գըրիչ ձեռին,

Առ հաշիւը մեր կորստին.

Անթիւ հոգիք թրքաց սըրին

Մարտալ եղան ի տէր կրօնին:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հնչակ»ի նայելով Մեծ Արմատան գիւղէն հաճի գալուստ անուն երիտասարդն ինքնապաշտպանութեան ոգի քարոզած լինելով՝ կառավարութեան մատնուած և հեծեալ ոստիկանօք պաշարուած գտած է իւր տունը սակայն ընկերներով ի միասին յաջողեր է ապաստանիլ Մնձուրի լերանց։ Իբր 100 հոգիէ բաղկացեալ խմբովն կը կոխէ գիւղերայն իւր մատնիչի տունն և կը սպաննէ զայն գնդակահար։ Մի քանի օր վերջ ալ առիթ կ'ունենայ դայիմագամին և նմա ընկերացող ոստիկանաց հետ զարնուելու յաջողութեամբ։ Յետոյ նահանգապետին հրահանգաց համեմատ հեծելազօրաց գունդ մի կը յղուի Գալուստի գէմ, որ իւր ամուր գիրքերէն գնդակ կը տեղացունէ զօրաց վերայ։ Միայն կէս ժամ կը տևէ մարտըն, յորում զօրաց հրամանատարն, 4 զինուոր և 3 ձի կը սպաննուին, և վիրաւորեալներ ալ կը լինին։ Զօրքն կը ցրուի, հայ հրոսակաւքին թողլով 8 հրացան և երեք ձի։

Նոյն թերթին կը հաղորդեն Կ. Պօլէն թէ Հոկտ. 19ին դատուած են վերջնապէս 13 բանտարկեալներ, իբրև յեղափոխականներ, որոց 5ն անպարտ արձակուեր են, մին՝ Կարապետ Թուր-Սադիս՝ ի բացակայութեան դատապարտուեր է 15 տարի բերդարգելութեան, մին 8 տարի շղթայակալ, երրորդն շորս տարի շղթայակալ, իսկ մնացեալ 5ն 5տկան տարի բերդարգելութեան։

—Ցաւալի է ըսել թէ Կարնոյ մէջ հնտախտն մուտ գտած է և բաւական կոտորած կ'ընէ. արդէն հարիւրներով կը համրուին զոհերն։

Հնտախտն դեռ վերջացած չէ Կովկասի կողմերն, և Երեւանի մէջ ալ նորէն սաստիկացեր է համաճարակն, որտէս կը տեղեկանամք Տփղիսի թերթերէն։

—Պաթումէն «Մշակի ուղղեալ թղթակցութենէ մի կը տեսնեմք թէ Մշոյ կողմէն գաղթել սկսած են վերջին տարիներս նաև հայ աղջիկներ, որոց երկուքն, խաչատուր և Օհաննէս կեղծ անուամբ և տղու հագուստով, կ'աշխատին եղեր իբր գործաւոր ի Պաթում՝ գործանոցի մի մէջ։ Դոցա սեռն վերջապէս հասկցուած է իրենց հայրենակցաց մատնութեամբ. որոյ հետեանք պիտի լինի գուցէ զգեստի և անուան ուղղութիւն և աւուրջէքի նուազում։

Կարի՛ տխուր երեւոյթ է հայ աղջկանց իբրև մշակ պանդխտութեան ստիպուիլն։

—Ի Կ. Պոլիս այս օրեր լոյս տեսած է Մեղքիտեղեկ եպ. Մուրատեանի «Հովսեփական Աստուածաբանութիւն» տիտղոսով գիրքն։

—Կ. Պօլսոյ «Հայրենիք» լրագիրն հանդանակութիւն բացեր է ինպատու ողբացեալ երգիծարան Պարոնեանի ընտանեաց։

ԲԱՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—«Սթանտարտ» կ'ըսէ թէ Պ. Նելիտոֆ, ռուսական դեսպան ի Կ. Պոլիս, հրաման ստացած է թոյլտուութիւն խնդրել Դռնէն՝ որպէս զի Ռուսական կառավարութիւնն կտրենայ պատերազմական ամենայն մթերք անցունել Տարտանէլէն առանց նախապէս հրաման առնելու։

Այդ պիտի մեծ խնդիր մի ընդունելի ընելու համար զարմանք չէ որ ռուսական ծանուցագիր մ'ալ նոյն ատեն պահանջէ, որպէս կը հաղորդեն հեռագրեր, որ Բ. Դուռն լման վճարէ 6 միլիոն ֆրանքի գումարն ի փոխարինութիւն 1878ի պատերազմին ատեն ռուսական հը-

պատակաց հասած վնասուց։ Այդ 6 միլիոնին 2 միլիոն 200 հազար ֆրանքն արդէն վճարուած լինելով, կը մընայ 165 հազար օսմանեան սակոյ գումար մի վճարելի։ Այս բոլորովին տարբեր է բուն պատերազմական տուգանքէն, որ ամ ըստ ամէ կը վճարուի, կամ պէտք է վճարուէր, տարեկան 8 միլիոն ֆրանքի հաշուով. յիշաւի այժմ կէս միլիոն լիրայի մօտ գումար մի ետ մնացած կայ օսմ. գանձուց անբաւականութեան պատճառաւ։

Հակառակ այդ անբաւականութեան, սակայն, թուրք կառավարութիւնն 50 միլիոն քարթուշի յանձնարարութիւն մ'ըրած Մազէրի գործանոցին, ի գին 12 միլիոն ֆրանքի։ Այս քարթուշներն շուտով կ'ուղեն, և կ'ըսուի թէ Գրուսի թնդանթները ալ պիտի խնդրուին ընդ հուպ։

—Զօրավար Պրիւլմոնի կողմանէ յանձնարարեալ վերանորոգման ամենն չպիտի կրնան ի գործ դրուիլ Պոնֆորի ամրութեանց վերայ, ի չգոյէ բաւական դրամի։ Զօրավարն նորէն Կ. Պոլիս պիտի երթայ եղեր գաւրուն։

—Զօրավար Պրիւլմոն այցելած է Անդրիանուպօլսոյ ամրութիւնքն, Դերգ-Բիլիսէի շուրջ։ Զօրավարն բացարձակապէս ժխտած է այն զրոյց թէ ռուսական կառավարութիւնն բողոքած լինի նորաներկայութեան և գործունէութեան դէմ ի Կ. Պոլիս։ Պրիւլմոն զինուորական երկրաչափն յօժար, իւր օգնութիւն ընծայելու ամենուն որք կը բաղձան պաշտպանել իրենք զիրենք և երջնապէս։ Նա թրքաց ալ իբր երկու ամսէ ի վեր կ'օգնէ պաշտթանողական, ոչ թէ յարձակողական սպառազինութեան վերաբերութեամբ։

Ամրութեանց վերանորոգման և ամբողջացման համար ի հարկէ յոյժ մեծ գումար հարկ է, բայց Թրքերն գիտեն հնար գտնել այդպիսի զինուորական ծախքերն թեթեւցունելու։ Ամրութեանց շինութեան համար պիտի աշխատողներն նոյն ինքն զօրքն, —այն զօրքն որ այնքան աժան զգեստով և աժան ուտելիքով գոհ կը լինի պատերազմի ատեն, ստիպուած է նաև աշխատիլ իբրեւ մշակ։

Յայտնապէս Թուրքն պատերազմի պատրաստ լինիլ կ'աշխատի։

—Պէյրութի կառավարիչն կամայականօրէն դադրեցուցած լինելով ճիւղութեաց արարերէն թերթն, գօլէժին վերադառնալն Կ. Պոլիս գնացած է արգելքն վերցունելու ստյուլ համար։

—«Թայմզ»ի ուղղեալ հեռագրի մի համեմատ՝ Դուռն իւր պուլկարական գործակատարին հրաման տուած կը լինի խնդրել պուլկար կառավարութեանն որ սա չհեշտէ պաշտօնական ճառերուն մէջ այն ընդունելութիւնն զոր Պ. Սթամպուլոֆ գտած էր Սուլթանէն։ Սակայն Պուլկար կառավարութիւն, իցաւ Դուռն, չատ ուշ դրած չէ այս խնդրանայն։ Թուրք լրագրեր Սոպրանիէի բացման ճառերն հրատարակած են յապուելով այդ անհաճոյ ակնարկութիւններն։

Ե.Օ.Դ

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փօս թի միջոցաւ խմբագրութեանս դրամ յղողներն Նիւ Եորքի փոստ օֆիսին Branch E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ զիւրուութիւն ընծայած կը լինին մեզ։

Յակոբ Էփրեմյան
348 Fountain Street
Providence R. I.

Կարապետ Էփրեմյան
28 South Margin Street
Boston, Mass
U. S. A.

ԷՔՐԻՉԵՆՆԵ ԵՂԵՐՈՒՄ

Յովհաննէս Էփրեմյան
57 CaManTo Hann,
Constantinople, Turkey.

Գէորգ Էփրեմյան
Harpoot
Turkey in Asia.

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տետրերն
ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, Հանդերձ պատուական և լաւ
յաջողեալ պատկերաւն Հայրիկի: 1892, գին 10 սէնթ կամ
50 սանթիմ:

«ՄԱՐԶՍԱՆ», դասագիրք զինուորական կրթու-
թեան: բազում ձեռնով բացատրեալ: աշխատանքեաց
Գրիգոր Գապարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեան,
գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք:

ԱՐՈՒԵՍ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատ-
կերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր
ընթերցումաց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի,
1891, գին 1 թալէն կամ 5 ֆրանք:

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՅԵԱԼՆ ՈՒ ԱՊՍ-
ԳԱՅՆ, 1888, նախապէս «Արեւելք»-ի մէջ հրատարակուած
գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան: Գին 20 սէնթ կամ 1 ր.

RONOFF & OLDSSEN

FINE CUSTOM TAILORS

And Dealers in

GENT'S FURNISHINGS

ԴԵՐՁԱԿ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԱՎԱՃԱՌ

214 Main St.

WORCESTER

MASS.

A. A. McLAUGHLIN

137 MAIN ST.

WORCESTER,

MASS.

Ես բազում Հայ յաճախորդներ ունիմ և ամեն շա-
բաթ երեկոյ Հայազգի վաճառող մ'ալ կը պահեմ վաճա-
ռատանս մէջ որ անգղիերէն խօսելու անվարժ Հայերուն
կը ցուցնէ մեր ապրանքներն, որք են գլխարկ, վերար-
կու, սոնազգետտ (փանթոն), գուլպա, շապիկ ևն. ևն.
Մեր գին ամենուն համար մէկ է եւ չափաւոր է. և-
կէք եւ տեսէք:

ՅՈՎՀԱՆՆԵՍ Մ. ՀԵՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանել թէ իւր 1554 B. Way
46 և 47 ֆողոցներուն միջեւ

Constantinople Bazaarի (Բոնսթանթինուլի Պապար) մէջ ու-
նի թրքական մեծաքանակ ձեռագործներ (embroidery)
գորգեր (խալի), ուրիշ զանազան թուրքիոյ ապրանք,
և կը ծախէ դիւրագին գներով այն Հայերու որք կ'ու-
զեն ամառանոցներն և այլ տեղեր երթալ վաճառակա-
թեամբ, և անոնց ևս որք կ'ուզեն ընծաներ տալ իրենց
բարեկամներուն և գործարանապետներուն: Թէ ապրա-
րանաց հարազատութեան և թէ գներու չափաւորու-
թեան մասին կրնամք կատարելապէս վստահեցունել
մեր Հայրենակիցները, ինչպէս արդէն շատեր փորձով
գիտեն:



**REGULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.**
A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Bilioousness, Headache, Consti-
pation, Dyspepsia, Chronic Liver Troubles,
Dizziness, Bad Complexion, Dysentery,
Offensive Breath, and all disorders of the
Stomach, Liver and Bowels.
Ripans Tabules contain nothing injurious to
the most delicate constitution. Pleasant to take,
safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail
on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.
Ripans Tabules cure headache.
Ripans Tabules cure constipation.
Ripans Tabules: for liver troubles.
Ripans Tabules: a family remedy.
Ripans Tabules: for sour stomach.

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Գ Ե Ղ Ա Գ Ո Ր Ծ

(Հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԵՔԵՆԻԿԱՍ ՍԵՅՎԻՆԿՍ ՊԵՆԻ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրը.
նան ապահովապէս դնել վերայիշեալ պանքային մէջ, որ
շահալ կը վճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ.
ամսոց կէսէն հաշուելով:

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE

NEW YORK CITY

16 և 17 թ փողոցներու միջև արևելեան կողմն:

—Ընտիր Գաղղիական խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

Հայեր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ու է արական
Հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat
House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօ-
տիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ
աժան:

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE,

NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ